ու սերգևիլը և այլ քաղցրահամ պտուղները յայտնի են ամեն տեղ։ Այդ երկրի ժողովուրդը պարապում է բացառապէս երկրագործութեամբ՝ բառիս բուն և ընդարձակ նշանակութեամբ։ Այդ հարուստ երկրի ժողովուրդը չափազանց աշխատասէր, նստակեաց, խաղաղ, տոկուն և վերին աստիճանի չարքաշ ժողովուրդ է։ Նրա ուշքն ու միտքը, խելքն ու զգացմունքները կենդրոնացած են միայն և միմիայն երկրագործութեան վրայ։ Ուտիացոց երկրի համբերատար ժողովուրդը սոված-ծարաւ կմեռնի, բայց ուրիշ երկիր չի գաղթի և ուրիշից որևէ ձրի բան ստանալ երբէք չի կամենայ։ Ուտիացոց երկրի ժողովրդի սիրած և պաշտած յատկանիշներն են՝ անդուլ աշխատասիրութիւն, շիտակութիւն, ասպետական վեհանձնութիւն, ճշտապահութիւն, հերոսական անվեհերութիւն և պատուազգածութիւն։ Փող և հարստութիւն դիզելու նպատակով նա երբէք չէ թափառում մեծամեծ և վաճառաշահ քաղաքներ։ Բագու-Թիֆլիզեան երկաթուղու գիծը բացուելուն պէս, կրկնում եմ, Կովկասի զանազան անկիւններից, գիւղացիք թողին իրենց մանգաղն ու արօրը և վազեցին Բագու, Թիֆլիզ և ուրիշ ամենահեռաւոր տեղեր՝ շուտով հարստանալու նըպատակով։ Դէպի Բագու արշաւող Հայ գիւղացիների մասին ամեն օր կարդում ենք մեր օրաթերթերում, որ նրանցից շատերը տարածում են յետընկած գիւղերում զանազան տեսակ ախտեր և վարակիչ հիւանդութիւններ և խախտում են Հայոց տոհմային ընտիր ու մաքուր բարքերը։ Եւ